ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷՍՄԱՅԻԼ ՋԱՖԱՐԻ ՄՈՀԱՋԵՐ

ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԻՐԱՆԻ ԳՈԼԵՍՏԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

ԻԴ.03.01 “Աշխարհագրություն” մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЭСМАЙИЛ ДЖАФАРОВИЧ МОХАДЖЕР

РАЗВИТИЕ ЭКОТУРИЗМА В ПРОВИНЦИИ ИРАНА ГОЛЕСТАН

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата географическох наук по специализации 24.03.01 “География”

ЕРЕВАН - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝
Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամ Ռոստոմի Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Ավանեսի Մելքումյան
Աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Սեյրան Ռաֆիկի Սուվարյան

Առաջատար կազմակերպություն՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է **2018 թ. հունվարի 26-ին, ժամը 13:^{00}**-ին՝ Երևանի պետական համալսարանում գործող «Երկրագիտության» 005 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է **2017 թ. դեկտեմբերի 26**-ին:

005 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Երկրաբ. հանք. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Մարատ Արիսի Գրիգորյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель:
Доктор геогр. наук, профессор Арам Ростомович Авагян

Официальные оппоненты:
Доктор геогр. наук, профеоссор Сергей Аванесович Мелкумян
Канд. геогр. наук, досент Сейран Рафикович Суварян

Ведущая организация: Ширакский государственный университет фонд имени М.Налбандяна

Защита диссертации состоится **26-ого января 2018г. в 13^{00}** на заседании Специализированного совета 005 “Науки о Земле” при Ереванском Государственном университете.
Адрес: 0025, Ереван, ул. А.Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан **26-ого декабря 2017 г.**
Учёный секретарь специализированного совета,
кандидат геолог.-минерал. наук, доцент Марат Арисович Григорян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տուրիզմը տնտեսության արագ զարգացող ճյուղերից մեկն է: Էկոտուրիզմը տուրիզմի ձևերից մեկն է, այն մեծ դեր ունի աշխատուժի զբաղվածության ապահովման, թույլ իրացված շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման, էկոլոգիական խնդիրների լուծման գործում:

Տուրիզմի նպատակային ձևերի կազմակերպման սկզբունքների, մեթոդների աշխարհայացքի մշակմամբ զբաղվում են մի շարք գիտություններ: Նրանց մեջ իր կարևոր տեղն ունի աշխարհագրությունը, որը խնդրի լուծումը տեսնում է ժամանակի, տարածության և համալիրության մեջ:

Էկոտուրիզմի զարգացման յուրահատուկ վայր է Իրանի Գոլեստան նահանգը: Այստեղ էկոտուրիզմի զարգացմանը նպաստում են բարենպաստ բնական պայմանները, յուրահատուկ լանդշաֆտները, բացառիկ ու գրավիչ ավանդույթներով ապրող էթնոսները, ենթակառուցվածքների որոշակի մակարդակը:

Այնուհանդերձ Գոլեստանում էկոտուրիզմի հնարավորությունների օգտագործման մակարդակը ցածր է, փոքր են ակնկալվող եկամուտները, կապիտալ ներդրումների ծավալները, մեծ են շրջակա միջավայրին հասցվող վնասները, ընդ որում այդ վնասները ունեն մեծանալու միտում:

Պատճառը էկոտուրիզմի կազմակերպման ցածր կուլտուրան է: Չկա տուրիստական ընկերությունների գործունեությունն ուղղորդող գիտականորեն հիմնավորված ծրագիր, որը կօգնի տուրիզմին տալ էկոլոգիական ուղղվածություն, ապահովել լանդշաֆտների ինքնավերականգնումը, էթնիկական արժեքների, պատմամշակութային ժառանգության պահպանումը:

Կազմակերպված էկոտուրիզմը հնարավորություն կտա ապահովել Գոլեստանի նահանգի սոցիալ-տնտեսական զարգացումը, բնապահպանական խնդիրների լուծումը, կայուն մարդկային զարգացումը:

Մշակված և գիտականորեն հիմնավորված էկոտուրիզմի տարածքային սիստեմը կարող է օրինակ ծառայել այլ շրջանների համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է աշխարհագրական գիտության ժամանակակից սկզբունքների, մոտեցումների, մեթոդների և մեթոդաբանության կիրառման միջոցով վերհանել Գոլեստան նահանգում էկոտուրիզմի զարգացման խոչընդոտները, մշակել դրանց վերացման ուղիները:

Դրված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. Տարբեր գիտական աղբյուրների հենքի վրա վերլուծել և ընդհանրացնել էկոտուրիզմի հետազոտության արդի տեսական մոտեցումները, մեթոդներն ու մեթոդաբանությունը:
2. Մեկ ընդհանրության դաշտ բերել Գոլեստանի էկոտուրիստական առումով հետաքրքրություն ներկայացնող բնական պայմանները, կարողությունները, հասարակական հնարավորությունները:

3. Գիտականորեն հիմնավորել թե որոնք են Գոլեստանում՝ էկոտուրիզմի զարգացման առումով առավել հեռանկարային թիրախային տարածքները (շրջանները):
4. Բացահայտել թե որոնք են այն անբարենպաստ գործոնները, որոնք հանդես են գալիս որպես սպառնալիքներ կամ մարտահրավերներ Գոլեստան նահանգում էկոտուրիզմի, կայուն մարդկային զարգացման համար:
5. Հիմնավորել թե էկոտուրիզմի զարգացումը ինչ ազդեցություն կարող է թողնել սոցիալ-տնտեսական ողջ համակարգի զարգացման վրա:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության ***օբյեկտը*** Գոլեստան նահանգի էկոտուրիզմի համակարգն է, իսկ ***առարկան*** էկոտուրիստական տարածքի տարածաժամանակային փոփոխություններն ու առանձնահատկությունները, Էկոտուրիզմի համակարգի և հասարակական կյանքի մյուս ձևերի առանձին տարրերի փոխկապակցությունները և փոխառնչություններն են:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել բնապահպանության, տուրիզմի, էկոտուրիզմի, հասարակական կյանքի տարածքային կազմակերպման, կայուն մարդկային զարգացման վերաբերյալ իրանական և արևմտյան երկրների գիտնականների, Անդի Դրամի և Ա.Մուրիի, Ռ.Բլամենի, Փ.Մասոնի, Շ.Ա. Շաբեդիի, Մ.Փանահադեիի, Կ. Լինդբերգի և Ջ. Հուբերի կողմից առաջարկվող տեսությունները, մոտեցումները և մեթոդները:

Որպես տեղեկատվական հիմք են ծառայել Իրանի և Գոլեստան նահանգի պաշտոնական տեղեկատվությունները, սոցիալական հարցման միջոցով հավաքված փաստական նյութերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատա-աշխարհագրական, վիճակագրական, քարտեզագրական SWOT վերլուծության մեթոդները:

Գիտական նորույթը:

1. Կայուն մարդկային զարգացման սկզբունքների հենքի վրա մշակվել է էկոտուրիստական դեստինացիաների գնահատման նոր հայեցակարգ:
2. Ժամանակի և տարածքի համատեքստում մշակվել է էկոտուրիզմի գիտականորեն հիմնավորված համակարգ (մոդել), որը կարող է օգտագործվել այլ շրջանների էկոտուրիստական համակարգերի ուսումնասիրության համար:
3. Բացահայտվել է, որ Գոլեստանի էկոտուրիստական համապետական և տեղական ինքնակառավարման կառույցների գործունեությունը կարող է արդյունավետ լինել միայն հստակ ռազմավարական ծրագրերի պայմաններում:
4. SWOT վերլուծական ծրագրի կիրառման միջոցով բացահայտվել են Գոլեստանի էկոտուրիստական տարածության ուժեղ և թույլ կողմերը, տրվել դրանց ներդաշնակման գիտական հիմնավորումները:

Պաշտպանվող հիմնադրույթները:

1. Վերլուծվել և հիմնավորվել է, որ էկոտուրիզմը՝ իր համալիրային տարածաժամանակային առանձնահատկություններով կարող է դառնալ աշխարհագրական գիտության հետազոտության օբյեկտ:
2. Հիմնավորվել է, որ էկոտուրիզմը՝ դրսևորվելով որոշակի ժամանակաշրջանում, սերտորեն կապված է աշխարհագրական միջավայրի բնական և հասարակական տարրերի, նրանց գոյությունը և գործունեությունը ապահովող օրենքների, սովորույթների հետ: Խնդիրը այդ կապվածության, փոխառնչությունների և դինամիկության տրամաբանական միասնության բացահայտումն է:
3. Հիմնավորվել է Գոլեստան նահանգի տուրիստական, սոցիալ-տնտեսական մյուս տարրերի տրամաբանական միասնությունը բնական միջավայրի անաղարտության պահպանման, մարդ-բնություն փոխհարաբերությունների ներդաշնակման հետ:
4. Բացահայտվել և հիմնավորվել են Գոլեստան նահանգի առավել կարևոր նշանակություն ունեցող տուրիստական (էկոտուրիզմի) դեստինացիաները:
5. Հիմնավորվել է էկոտուրիզմի զարգացումը Գոլեստան նահանգում, որը կարող է դրական ազդեցություն թողնել սոցիալ-տնտեսական ողջ համակարգի և կայուն մարդկային զարգացման վրա:

Աշխատանքի գիտագործնական նշանակությունը: Աշխատանքում կիրառված մեթոդաբանական մոտեցումները, սկզբունքները, մեթոդները, ստացված արդյունքները կարող են գիտական հիմք հանդիսանալ Գոլեստանում կամ այլ տարածաշրջաններում էկոլոգիական ռազմավարական ծրագրերի ստեղծման համար:

Առաջարկվող էկոտուրիստական շրջանները զարգանալով կարող են վերածվել աճի բևեռների (կենտրոնների) և հիմք հանդիսանալ երկրի ողջ տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման, էկոլոգիական խնդիրների լուծման, կայուն մարդկային զարգացման համար:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության և Սերվիս ամբիոնների համատեղ նիստերում և սեմինարներում (2013թ., 2014թ., և 2016-2017թթ.): Բացի այդ, ատենախոսության հիմնական արդյունքները զեկուցվել են 2013-2016թթ. Թեհրան քաղաքի Շահիդ Բեհեշտի համալսարանում կայացած ուսանողների միջազգային համաժողովներում, ինչպես նաև 2016 թվականի հոկտեմբերին Շիրազ քաղաքի համանուն համալսարանում կայացած գիտաժողովում: Աշխատանքի հիմնական դրույթները արտացոլվել են 8 գիտական հոդվածներում, որոնցից 3-ը հրապարակվել են միջազգային ամսագրերում: Հեղինակը նաև ունի մենագրություն՝ Գոլեստան նահանգի բնության վերաբերյալ:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններ բաժնից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը պարունակում է 30 աղյուսակ, 30 բնանկար և գծապատկեր: Ատենախոսության տեքստը շարադրված է 119 համակարգչային էջում /առանց հավելվածի/:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 1. «Էկոտուրիզմի զարգացման տեսական և մեթոդաբանական հարցերը»: Գլխում էկոտուրիզմի զարգացման տեսական և մեթոդաբանական սկզբունքները, մոտեցումները բացահայտելու համար մանրամասն վերլուծության են ենթարկվել Եվրոպայի և Իրանի մի շարք գիտնականների՝ Անդի Դրամի և Ա. Մուրիի, Շ.Ա. Շաբեդիի, Մ. Փանահանդեիի, Ֆ. Ֆալլահի և Ա. Գավիտելիի, Մ. Ջահանյանի և Զ. Նադ Ալի Փուրի և ուրիշների կարծիքները: Նրանց բոլորի մոտ կա մեկ ընդհանրություն՝ էկոտուրիզմը ճանապարհորդություն է դեպի բնություն, նրա բնական ընթացքը չխանգարելու, չմիջամտելու և ընդհանրապես, որոշ բնապահպանական գործընթացներ կազմակերպելու նպատակով:

1999 թվականին, Մարտ Հանը տվել է էկոտուրիզմի մասին հետևյալ մեկնաբանումը՝ «էկոտուրիզմը ճամփորդություն է լավ, առողջ և սովորականի պես պահպանված զգայուն շրջաններ»: Զբոսաշրջիկի համար էկոտուրիզմը մի տեսակ ուսուցողական շրջագայություն է, որից ստացվող եկամուտն ուղղակիորեն ծախսվում է բնության պահպանման և տեղական հասարակությունների տնտեսական զարգացման ու հզորացման քաղաքականության, ինչպես նաև ազդում է մշակույթի ու իրավունքի պաշտպանության զարգացման ուղղությամբ: Իրանի Ջահադ համալսարանի հրատարակչության կիրառական գիտական հոդվածում էկոտուրիզմը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Էկոտուրիզմը պատասխանատու ճամփորդություն է բնական տարածքներ, որը շրջակա միջավայրի պահպանման և տեղաբնիկների կյանքի որակական փոփոխությունների պատճառ է դառնում»:

Այսօր էկոտուրիզմը համարվում է զբոսաշրջության ամենակարևոր ոլորտներից մեկը, որը նպաստում է տարբեր երկրների տնտեսության զարգացմանը: Նա մեծ դրական ազդեցություն է թողնում աշխարհի տնտեսական, մշակութային և սոցիալական կյանքի վրա: Այս առումով էկոտուրիզմը և շրջակա միջավայրը մարդկային և բնության կողմերով փոխադարձաբար կապված են:[1]

Սակայն վերջին տասնամյակի ընթացքում զբոսաշրջության տնտեսական շահերն ուղեկցվել են շրջակա միջավայրի բազմաթիվ վնասներով:[2]

Ընդհանուր առմամբ զբոսաշրջության՝ միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնները կարելի է բաժանել երեք խմբի՝ 1. ռեսուրսների օգտագործում, 2. բնակիչների և զբոսաշրջիկների վերաբերմունքը միջավայրի նկատմամբ, 3. աղտոտվածության տեսակներ:

Աշխարհագրական յուրահատուկ դիրքի, կլիմայական բարենպաստ պայմանների, հարուստ մշակութային ժառանգության շնորհիվ Իրանն այսօր պատկանում է աշխարհի զբոսաշրջուության 10 լավագույն երկրների շարքին:[3]

Գծանկար 1-ում ամփոփ տեսքով պատկերված է տուրիզմի ազդեցությունը միջավայրի վրա:

---

[1] Yazdi P., Yazdi M. H. & Saghaie M., "Tourism (Essence and Definitions)." Tehran-Second Edition of Samt Publication, 2007; p: 220

[2] Gunn C. A. & Var T., Tourism Planning (4th ed.). New York: Taylor and Francis Books Inc, 2011. pp:50-77

[3] Niyazmand M., "Ecotourism Progress in Mountainous Areas". Koja Mahname, N 2 and 3, 2004; p: 54



Գծ. 1. Տուրիզմի ազդեցությունը միջավայրի վրա[4]

Գլուխ 2. «Գոլեստան նահանգի Էկոտուրիզմի զարգացման նախադրյալների վերլուծությունը»: Այստեղ քննարկվում են էկոտուրիզմի զարգացման նախադրյալները Գոլեստան նահանգում: Մասնավորապես խոսվում է տարածքի, բնակչության կազմի, ռելիեֆի, տեղագրության, ջրային ռեսուրսների, ջրվեժների, ցեխային հրաբուխների, քարանձավների, բուսական և կենդանական աշխարհի մասին:

Տարածքը, բնակչությունը: Գոլեստան նահանգի տարածքը կազմում է 20 438կմ^2՝ Իրանի ընդհանուր տարածքի 1.3%-ը: Գտնվում է Կասպից ծովի ծայր հարավարևելյան հատվածում: Հյուսիսից Գոլեստանը սահմանակից է Թուրքմենիայի Հանրապետությանը, հարավից՝ Սեմանի, արևելքից՝ Խորասանի նահանգներին, իսկ արևմուտքից՝ Կասպից ծովին ու Մազանդարանի նահանգին:

Գոլեստանը մարդկային մշակույթի հնագույն օջախներից մեկն է: Քիարամ քարայրի պեղումները ցույց են տվել, որ նա շուրջ 100 հազար տարի առաջ եղել է նախամարդու բնակության վայր: Ըստ Թուրանգ Թափեի կատարած ամենավերջին հնէաբանական պեղումների՝ Գոլեստանում քաղաքակրթությունը 5000 տարեկանից ավելի է: Հնամենի քաղաքակրթության վկաները սփռված են նահանգի ողջ

[4] Mahdavi D., Tourism Industry Progress and Presentation of Strategic Model SWOT, Tarbiyat Modarres University, 2003թ., էջ 79

տարածքով մեկ: Էկոտուրիստական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում բնակավայրերը՝

ա. քաղաքները, իրենց կառուցապատման հին ու նոր ձևերով՝ միջնադարյան յուրահատուկ փողոցներով ու շենքերով, գերժամանակակից կառույցներով,

բ. գյուղերը՝ իրենց յուրահատուկ շինություններով և ավանդույթներով:

Գոլեստան նահանգը գրավիչ է նաև իր բնակչությամբ, նրա ազգային կազմը հետևյալն է՝ թուրքմեններ, պարսիկներ, ղազախներ, ադրբեջանցիներ և ղըզըլբաշեր: Գոլեստան նահանգը Իրանի բազմամշակույթ, բազմալեզու ու բազմակրոն տարբեր էթնիկ խմբերի ներդաշնակ համակեցության հետաքրքիր օրինակ է: Մշակութային այս խայտաբղետությունը ևս էկոտուրիզմի զարգացման բարենպաստ հնարավորություններ և գրավչություն է ապահովում:

Ընդհանրապես տուրիզմի, մասնավորապես էկոտուրիզմի զարգացման շատ լավ պայմաններ է ստեղծել բնությունը՝ մեղմաթեք լանջերով, մեծ մասամբ անտառապատ լեռները, ջրառատ գետերը, ծովափնյա ընդարձակ տարածքները, բուսական և կենդանական աշխարհը, ազգային պարկերը և մեծ ու փոքր ջրվեժները, որոնցից յուրաքանչյուրն էկոտուրիզմի զարգացման կարևոր գործոն է համարվում: Ջրվեժների ու աղբյուրների հարակից տարածքները կարող են վերածվել գեղեցիկ հանգստավայ-ների՝ լայնորեն օգտագործվելով էկոտուրիզմի զարգացման մեջ:

Կասպից ծովի առափնյա գոտին, հատկապես նրա հարավարևելյան մասը, որն ընդգրկում է Գոլեստան նահանգի տարածքը, բարենպաստ պայմաններ ունի տուրիզմի, հատկապես՝ ջրային-մարզական տուրիզմի զարգացման համար:

Գոլ-Ռամիյան և Զիարաթի հանքային ջրերի աղբյուրները: Սրանց հարակից տարածքները հանդիսանում են Գոլեստան նահանգի և Իրանի տուրիստական կարևոր շրջաններից:

Միջազգային նշանակություն ունեն Ալագոլի, Ալմագոլի, Աջիգոլի, Գոմիշանի, Ինչէ-Բորուն և Բիշիրվան ճահճային տարածքները: Դրանք մեծ կարևորություն ունեն ճանաչողական, մարզական տուրիզմի և ձկնորսության զարգացման տեսանկյունից՝ շնորհիվ չվող թռչունների, ձկնատեսակների տեսակային մեծ բազմազանության:

Նկար. 1. Գոլֆեշան, հրաբխային տեսարան
Աղբյուր՝ Google Earth, 2012

Էկոտուրիստական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում գոլֆեշանները՝ ցեխ ու գազ արտանետող հրաբուխները (նկար 1), քարանձավները, անտառները:

Գոլեստանում անտառածածկ մակերեսը կազմում է 430 հազար հա տարածք: Նրանք մեծ նշանակություն ունեն էկոտուրիստական, էկոլոգիական և տնտեսական առումներով:



Գծ. 2. Գոլեստան նահանգի բուսական ծածկույթի և էկոտուրիստական նախադրյալների քարտեզը, 2016թ.

Ներկայացված քարտեզում ցուցադրված են զբոսաշրջության նշանակության գյուղերը, անտառային տարածքները և այգիները /գծ.2/: Նահանգի անտառները հիմնականում ձգվում են Մազենդարան ծովից դեպի Սեմնան և Հյուսիսային Խորասան նահանգի սահմանային գոտու երկայնքով: Այդ նույն ուղղության վրա ընկած են նաև էկոտուրիստական նշանակության գյուղերը, ինչպիսիք են Չեջա, Չինո, Փաղալեհ, Ֆարսիան և Թանգեռահ գյուղերը: Իսկ Թոսքեստան և Թոշան գյուղերը ձգվում են դեպի Գորգանի ծոցի ուղղությամբ: Թվարկված գյուղերը հարուստ են խիտ անտառային ծածկույթով և էկոտուրիստական առումով համարվում են գրավիչ վայրեր:

Գլուխ 3. «Գոլեստան նահանգի կարևորագույն էկոտուրիստական դեստինացիաները և տուրիզմի ոլորտի եկամտաբերությունը»:

Այս գլխում քննարկվում են Գոլեստանի կարևորագույն էկոտուրիստական տարածքները՝ դեստինացիաները: Էկոտուրիստական դեստինացիաների առումով ուշագրավ է հատկապես Գոլեստանի ազգային պարկը, որն ունի 91895հա տարածք:

Գոլեստանի ազգային պարկը աչքի է ընկնում բուսական ու կենդանական աշխարհների հարստությամբ ու բազմազանությամբ: Իր յուրահատուկ աշխարհագրական դիրքի և բնակլիմայական պայմանների բազմազանության շնորհիվ այս պարկը օժտված է տուրիստական բարձր նշանակությամբ, ինչի շնորհիվ գրավում է մեծ թվով այցելուների՝ ինչպես Իրանի տարբեր շրջաններից, այնպես էլ այլ երկրներից:

Էկոտուրիստական առումով մեծ նշանակություն ունի ***Դալանդ անտառային պարկը***: Նրա բուսական տեսակներն են կաղնին, բոխին, ազնվական ծառը, թզենին, բարդին, Populus (L) թխկին և կնձնիներին պատկանող ծառերը (Ulma Ceae): Այս պարկը ունի առողջարանային և հանգստի այլ տեսակների զարգացման լայն հնարավորություններ:

Ղորղի անտառային պարկը գտնվում է Գորգան քաղաքի արևելյան մասում՝ 23 կմ հեռավորության վրա՝ մայրուղուն կից: Այս պարկը վերանորոգված է և ապահովված ճամբարներով, գիշերակացի բոլոր հնարավորություններով: Այգում պայմաններ են ստեղծված այծքաղների՝ գազելների վայրի տեսակների բնակության համար: Ամեն տարի հազարավոր զբոսաշրջիկներ են այցելում այս պարկը:

Նահար-Խորանի անտառային պարկը Գոլեստան նահանգի ամենահին հանգստավայրերից է, գտնվում է Գորգան քաղաքի հարավային մասում: Այս պարկը անտառային համալիր է ճանապարհի եզրին, գետափնյա հատվածում: Այստեղ տեղակայված են զբոսաշրջիկների տեղավորման և սննդի հաստատություններ, զբոսաշրջային և այցելուների ընդունման կազմակերպություններ:

Միանկալե թերակղզի: Կասպից ծովի հարավային ափերի ամբողջ երկայնքով միակ թերակղզին է: Ամեն տարի ձմռանը այստեղ են գալիս չվող թռչուններ: Միանկալեն կարող է դառնալ էկոտուրիստական յուրահատուկ և կարևոր դեստինացիա: Այստեղ մեծ հնարավորություններ կան առողջարանների ստեղծման և շահագործման, ինչպես նաև ջրային մարզաձևերի՝ լողի, նավարկությունների և ջրային սահքախաղերի կազմակերպման ու անցկացման համար:

Գորգանի ծոցը՝ երկարությամբ 60 կմ, լայնությամբ մինչև 12կմ, ձգվում է արևելքից արևմուտք՝ եռանկյան տեսքով: Գորգանի ծոցի մակերեսը կազմում է 400 կմ^2 և ընկած է Գոլեստանի ու Մազենդարանի նահանգների միջև: Ձևավորվել է Կասպից ծովի ջրի մակարդակի իջեցման հետևանքով: Գորգանի ծոցի հարավային ափին են գտնվում Բանդար-Թորքաման քաղաքը, մի շարք գյուղեր և ավաններ: Իր յուրահատուկ կենդանական ու բուսական աշխարհով Գորգանի ծոցը կարող է դառնալ կարևոր էկոտուրիստական դեստինացիա:

Այս գլխի երկրորդ ենթավերնագրում ներկայացվել և վերլուծվել են տուրիզմի ոլորտում ստացված եկամուտները թե՛ Իրանի և թե՛ Գոլեստան նահանգի համար, 2006-2015թթ. տարիների ընթացքում:

Տուրիզմի ոլորտի ցուցանիշները

Աղյուսակ 1.

ԻԻՀ և Գոլեստան նահանգի տուրիզմի ոլորտի ցուցանիշները, 2006-2015թթ.

Տարի	Երկրի մակարդակով տուրիստների քանակը, մարդ	Երկրում Տուրիզմի ոլորտի ընդհանուր եկամուտը, (ԱՄՆ դոլար)	Նահանգում Տուրիզմի ոլորտի ընդհանուր եկամուտը, (ԱՄՆ դոլար)
2006թ.	2171699	2975227630	267770486.7
2010թ.	3294126	6094133100	658166374.8
2015թ.	6299850	9327769690	1026054666

Աղբյուր՝ Մշակութային ժառանգություն կազմակերպություն, ԻԻՀ, 2016թ.

Վերջին տաս տարիների կտրվածքով տուրիզմի ոլորտի ցուցանիշները՝ զբոսաշրջիկների քանակը և տուրիստական ծառայություններից ստացված տարեկան եկամուտները բերված են աղյուսակ 2-ում: Աղյուսակից երևում է, որ ոլորտի եկամտաբերությունը դանդաղ սակայն հաստատուն աճի տեմպով է ընթանում: Աղյուսակի տվյալներից, կարելի է եզրակացնել, որ տուրիզմի ոլորտի տարեկան եկամտաբերության միջին աճի տեմպը՝ երկրի համար 0.14 է, իսկ նահանգի համար՝ 0.17:



Գծ. 3. ԻԻՀ Տուրիզմի ոլորտի եկամտաբերությունը, 2006-2015 թթ.
(Աղբյուր՝ հետազոտության արդյունք)

2015 թվականի ընթացքում տուրիզմի ոլորտը ապահովել է 500,000 աշխատատեղ: Սա անշուշտ ընդգծում է տուրիզմի արդյունաբերության նշանակությունը, որը գյուղական վայրի բնակչության և աղքատ ընտանիքների ու գործազուրկների համար աստիճանաբար վերածվելու է կայուն եկամտի աղբյուրի:

Թեպետ երկրի մակարդակով Գոլեստան նահանգի եկամտաբերությունը տուրիզմի ոլորտում չի գերազանցում 11 տոկոսը, սակայն դա նշանակալից ազդեցություն ունի ոլորտի համընդհանուր զարգացման համար: Եկամտաբերության

ցածր տոկոսը խոսում է այն մասին, որ Գոլեստան նահանգում տուրիզմի ոլորտին դեռևս անհրաժեշտ ուշադրությունը բարձի թողի է մատնված, դա մասամբ նաև կապված է գործող օրենքների անկատարության հետ, որոնք դեռևս լիովին չեն նպաստում էկոտուրիզմի զարգացմանը:



Գծ. 4. Գոլեստան նահանգի Տուրիզմի ոլորտի եկամտաբերությունը, 2006-2015 թթ. (Աղբյուր՝ հետազոտության արդյունք)

Դրան հակառակ, էկոտուրիզմի զարգացմանը խանգարում է միջազգային մակարդակով քաղաքական և տնտեսական շրջափակումները, ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակը, տեղաբնիկների անտեղյակությունը: Խնդրի լուծմանը կարող են նպաստել շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության խորացումը, տեղաբնիկների աշխատանքային նորույթների բարելավումը, կրթվածության մակարդակի բարձրացումը, հասարակության մեջ կայուն միջավայրի, կայուն կյանքի գաղափարի և տիրոջ զգացումի ամրապնդումը, այնպես որ տեղաբնիկը դառնա իր ապրելավայրի տերը և ըստ իր գաղափարի կառուցի իր տունը:

Գլուխ 4. «SWOT վերլուծություն և էկոտուրիզմի զարգացման ռազմավարությունների գնահատում»: Այս գլխում SWOT վերլուծության միջոցով տրվել է Գոլեստանի էկոտուրիստական ողջ համակարգի գնահատականը, ըստ որի տրվել են էկոտուրիզմի զարգացման ուժեղ և թույլ կողմերը, մշակվել են ռազմավարական մոտեցումները: Համադրության մատրիցայի կառուցման արդյունքում առանձնացվել են չորս ուղենիշներ կամ ռազմավարական մոտեցումներ:

Աղյուսակ 2.

SWOT-ի մատրիցա

Արտաքին գործոներ Ներքին գործոններ	Ուժեղ կղմեր, **S**	Թույլ կողմեր, **W**
Բարենպաստ հնարավորություններ, **O**	«Ագրեսիվ» ռազմավարություններ, **SO**	«Վերանայման» ռազմավարություններ, **WO**
Մարտահրավերներ, սպառնալիքներ, **T**	«Տարբեր-խառը» ռազմավարություններ, **ST**	«Պաշտպանության» ռազմավարություններ, **WT**

Աղբյուր՝ Ֆարդար, 2009թ., էջ 367

SWOT անալիտիկ մատրիցան և արդյունքների վերլուծությունը ցույց են տալիս, որ Գոլեստան նահանգում էկոտուրիզմի զարգացմանն ուղղված ներքին գործոններից 17-ը համարվում են ուժեղ կողմեր, իսկ 11-ը՝ թույլ կողմեր: Էկոտուրիզմի զարգացման արտաքին գործոններից 12-ը դիտարկվում են որպես արտաքին հնարավորություններ, իսկ 11-ը՝ որպես արտաքին սպառնալիքներ-մարտահրավերներ: Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ բնական-միջավայրային ուղղվածության ուժեղ կողմ-գործոնները, ինչպիսիք են Լուվեի, Քաբուդվալի, Աղ-Սուի ջրվեժները, խիտ անտառները և Դերազնոյի, Ջահան նամայի բարձունքները, Գոլեստանի ազգային պարկը, 1450 ընդհանուր վարկանիշով և 4.34 միջին միավորով համարվում են Գոլեստան նահանգի ամենակարևոր ուժեղ կողմերը:

Ներքին միջավայրային գործոններից թույլ կողմերի շարքում անբարենպաստ ու անհարմար բժշկական-հիգիենիկ հարմարությունները, կացարանային ու հանգստյան ոչ բավարար հնարավորություններն ու սարքավորումները /հյուրանոցներ, ճամբարներ, առողջարաններ և այլն/, համարվում են ամենակարևոր թույլ կողմերը: Արտաքին գործոններից զբոսաշրջության հնարավոր ենթակառուցվածքների՝ ճոպանուղու, խաղահրապարակների զարգացումը գտնվում է գերակայությունների շարքում: Արտաքին ամենակարևոր սպառնալիքներից պետք է նշել գյուղատնտեսական լավագույն հողահանդակների կորուստը:

Ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը հնարավորություն է տալիս տալ էկոտուրիզմի զարգացման պոտենցիալի համալիրային գնահատականը և բացահայտել զարգացման ռազմավարությունները:

SO-«ագրեսիվ» կամ մրցակցային ռազմավարություններ:

Այս ռազմավարությունները պայմանավորված են ուժեղ կողմերով և արտաքին բարենպաստ հնարավրություններով: Արդեն խոսվել է այն մասին, որ Լուվեի ջրվեժը, Քաբուդվալը, Աղ-Սուն և խիտ անտառները, Դերազնոյի, Ջահան նամայի բարձունքներն ու Գոլեստանի ազգային պարկը, Գոլեստան նահանգում 1450 ընդհանուր վարկանիշով և 4.34 միջին արժեքով համարվում են կարևորագույն ուժեղ կողմերը, իսկ դրանց հաջորդում են հանգստյան և զբոսանքի զարգացման գրավչությունները՝ Գորգանի Նահարխորան, Բանդար Գազի և Բանդար-Թորքամանի, Գոլ Ռամիյանի, Դալանդի անտառային պարկը, Ղորղի ու Ալանգ դարեի պարկերը ՝ 1386 ընդհանուր վարկանիշով ու 4.14 միջին արժեքով:

Նահանգի մեղմ կլիմայական պայմանները 1368 ընդհանուր վարկանիշով և 4.09 միջին արժեքով բարենպաստ հնարավորությունների տեսակետից գտնվում են երրորդ շարքում:

Արտաքին բարենպաստ հնարավորությունների բաժնում զբոսաշրջության ենթակառուցվածքների՝ ճոպանուղու, խաղահարթակների զարգացումը 1368 ընդհանուր վարկանիշով և 3.95 միջին արժեքով գտնվում է 1-ին հորիզոնականում: Հաղորդակցության ցանցի՝ երկաթուղու, օդանավակայանների, մայրուղիների և ծովային ուղիների ընդարձակումը, զբոսաշրջիկների տեղաշարժը հարմարավետ ու արագ դարձնելու համար՝ 1312 ընդհանուր վարկանիշով և 3.92 միջին արժեքով զբաղեցնում է 2-րդ տեղը:

Էկոտուրիզմի ճիշտ զարգացման համար պետք է առաջնորդվել ներկա առավելությունների ինտենսիվ օգտագործմամբ, օրինակ՝

1. Զբոսանքի և սպորտային՝ լողի, ջրային դահուկասպորտի, ձկնորսության, նավարկության զարգացման հնարավորությունների ապահովումը Բանդար Գազ, Բանդար Թորքաման և Գոմիշանի ճահճային տարածքներում: 2. Դերազնոյի բարձունքներում և այլ վայրերում ստեղծել դահուկասպորտի, ժայռագնացության, դելտապլանային և պարաշյուտային սպորտի զարգացման հնարավորություններ, ճոպանուղի: 3. Խալեդ նաբի դամբարանում, Ռադեքան բորջի, Դիվարե-էսկանդարում և Թորանգ Թափեում ստեղծել և/կամ վերականգնել պատմամշակութային գրավչության օբյեկտները և ապահովել դրանց կայուն շահագործումը: 4. Ընդարձակել հաղորդակցության ցանցը՝ երկաթուղի, մայրուղի, ծովային ճանապարհներ, և կազմակերպել բեռնափոխադրման համակարգեր: 5. Զբոսաշրջային այցելությունների ավելացման համար հնարավորություններ ստեղծել Գոլեստանի ազգային պարկում, հատկապես վայրի բնաշխարհի տարածման հատվածում: 6. Կասպից ծովի հարավային ափերում բնակվող տեղական և չվող թռչունների դիտման հնարավորությունների ստեղծում: 7. Նահանգի ծովային, լեռնային և ջրաճահճային տարածքներում թռչունների որսի թույլտվություն: 8. Ժայռագնացության, անապատագնացության, ջրային, ձմեռային մարզաձևերի և ձկնորսության կազմակերպում: 9. Լեռնագնացություն դեպի Շահվար, Փիր Գերդ-Քահ, Քահքաշան, Սիահ Մարզգար, Թոլոնբար, Շահ Փասանդ, ինչպես նաև Շիրաբադի, Քիարամի և այլ քարայրեր մագլցելու հնարավորության ստեղծում: 10. Բանդար-Գազ և Բանդար-Թորքաման առափնյա հանգստավայրերի կազմակերպում, ինչպես նաև Գոմիշանի, Գորգանի ծոցի և Ալա-Գոլ, Ալմա-Գոլ, Աջի-Գոլ միջազգային ջրաճահճային տարածքներում:

ST-տարբեր՝ խառը ռազմավարություններ: Այս ռազմավարությունը հիմնված է ներքին ուժեղ կողմերի և արտաքին սպառնալիքների վրա՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ ուժեղ կողմերի բաժնում յուրահատուկ բնական տարածքները, ինչպես, օրինակ՝ Լովեի, Քաբուդ-Վալի, Շիրաբադի, Աղ-Սուի ջրվեժները, խիտ անտառները, Դերազնոյի և Ջահան նամայի բարձունքները և Գոլեստանի ազգային պարկը, ունենալով 1450 ընդհանուր վարկանիշ և 4.34 միջին արժեք, համարվում են ամենակարևոր ուժեղ կողմերը:

Սրանց հաջորդում են հանգստի ու զբոսանքի գրավիչ վայրերը՝ Գորգանի Նահար-Խորանը, Բանդար-գազի և Բանդար-Թորքամանի, Գոլ-Ռամիյան, Դալանդի անտառային պարկը և Ղորողի ու Ալանգ-Դարեի անտառային պարկերը, որոնք այս նահանգում ունեն 1368 ընդհանուր վարկանիշ և 4.14 միջին արժեք:

Նահանգի մեղմ կլիմայական պայմանները, ունենալով 1368 ընդհանուր վարկանիշ և 4.09 միջին արժեք, գտնվում են երրորդ տեղում:

WT-պաշտպանական ռազմավարություններ: Այս ռազմավարությունները կազմվում են ներքին թույլ կողմերի և արտաքին սպառնալիքների համադրմամբ, դրանց հիման վրա:

Ներքին թույլ կողմերի շարքում առանձնանում են առողջապահական համակարգի զարգացման անբավարար մակարդակը, կացարանային անբարենպաստ պայմանները, ինչպես նաև հանգստի և զբոսաշրջության

սպասարկման թերի հնարավորությունները, որոնք ունեն 1274 ընդհանուր վարկանիշ և 3.81 միջին միավոր՝ հանդիսանալով ամենաէական թույլ կողմերը:

Երկրորդ տեղում գտնվում է ղեկավարների կողմից էկոտուրիզմի զարգացման թերի ծրագրումը, որն ունի 1256 ընդհանուր վարկանիշ ու 3.76 միջին միավոր: Զբոսանքի և խաղային հանգստի անբավարար հնարավորությունները՝ խաղահարթակները, մոտոսպորտի և մեքենաների վարման, նավարկության ու դահուկային սպորտի հարմարությունները, ունենալով 1246 ընդհանուր վարկանիշ և 3.73 միջին քաշ, գտնվում են երրորդ տեղում:

Արտաքին սպառնալիքների բաժնում առաջին տեղում է գտնվում գյուղատնտեսական հողահանդակների կորուստը, որն ունի 1188 ընդհանուր վարկանիշ և 3.55 միջին միավոր:

Հողի գնի արհեստական բարձրացումը բորսաների և միջնորդների միջոցով, խոշոր ֆինանսիստների «գրոհն» այս նահանգ ունի 1180 ընդհանուր վարկանիշ և 3.53 միջին միավոր՝ գտնվելով երկրորդ տեղում:

Նահանգի քաղաքային ու գյուղական բնակավայրերում բորսաների ու միջնորդների կողմից հողային տարածքների ֆունկցիոնալ օգտագործման փոփոխությունները, հողի գնի բարձրացումը՝ կախված որակից ու տեղադիրքից, ունի 1138 ընդհանուր վարկանիշ ու 3.40 միջին միավոր՝ գտնվելով 3-րդ տեղում:

WO-վերանայման ռազմավարություններ, որոնք ընդգրկում են թույլ կողմերը և արտաքին հնարավորությունները:

Թույլ կողմերի բաժնում անբարենպաստ առողջապահական համակարգը, անբավարար կացարանային պայմանները, ինչպես նաև հանգստի ու զբոսաշրջության սպասարկման ու կազմակերպման թերի հնարավորություններն են, որոնք ունեն 1274 ընդհանուր վարկանիշ և 3.81 միջին միավոր՝ հանդիսանալով ամենակարևոր թույլ կողմերը: Երկրորդ տեղում գտնվում է ղեկավարների կողմից էկոտուրիզմի զարգացման թերի ծրագրումը, որն ունի 1256 ընդհանուր վարկանիշ ու 3.76 միջին միավոր: Զբոսանքի և խաղային ու սպորտային հանգստի զարգացման անբավարար հնարավորությունները, ունենալով 1246 ընդհանուր վարկանիշ և 3.73 միջին միավոր, գտնվում են երրորդ տեղում:

Արտաքին հնարավորությունների բաժնում առաջին տեղում է գտնվում ճոպանուղու, խաղահարթակների և այլ ենթակառուցվածքների հնարավոր զարգացումը 1320 ընդհանուր վարկանիշով ու 3.95 միջին արժեքով: Սրան հաջորդում է տրանսպորտի և կապի համակարգի՝ երկաթուղային ցանցի, օդանավակայանների, մայրուղիների և ծովային ուղիների զարգացումը՝ զբոսաշրջիկների տեղաշարժը արագ և հարմարավետ դարձնելու համար՝ 1312 վարկանիշով և 3.92 միջին արժեքով: Այս նահանգում ճամփորդելու ցանկության առաջացումը մյուս նահանգների բնակիչների մոտ, ունենալով 1300 ընդհանուր վարկանիշ ու 3.89 միջին միավոր, գտնվում է երրորդ տեղում:

Հնարավորությունների օգտագործման, թույլ կողմերի նվազեցման և էկոտուրիզմի ճիշտ կազմակերպման համար կարելի է առաջարկել՝

1. Վերանայել նահանգի բոլոր զբոսաշրջային հնարավորություններն ու ռեսուրսների օգտագործումը՝ ի նպաստ առավել նպատակային և կայուն օգտագործման: 2. Վերանայել հողատարածքների կիրառության վերաբերյալ

օրենքները՝ էկոտուրիստական տարածքներում դրանց կայուն և ճիշտ օգտագործման նպատակով: 3. Ապահովել նահանգի բնակչության ուսուցումը՝ էկոտուրիզմի հնարավոր դրական ազդեցությունների, դրանցից ճիշտ օգտվելու վերաբերյալ: 4. Զբոսաշրջային գործակալությունների ստեղծում և զարգացում, էկոտուրիստական տուրերի մշակում, ուսանողական, հետազոտական և գիտաուսուցողական տուրերի մշակում: 5. Գազ և Թորքաման նավահանգիստների էկոտուրիստական հնարավորությունների զարգացում և օգտագործում: 6. Կասպից ծովի առափնյա հատվածում էկոտուրիստական և զբոսանքի գոտիների ստեղծում: 7. Մասնավոր հատվածի պաշտպանություն և խրախուսում՝ նահանգում էկոտուրիզմի ֆինանսավորման առումով: 8. Տեղաբնիկների ներուժի օգտագործում՝ ենթակառուցվածքների զարգացման և սարքավորումների ձեռքբերման առումով: 9. Տեղական իշխանության ներկայացուցիչների ուսուցում և իրազեկում: 10. Մարդկային ռեսուրսների օգտագործում՝ նահանգի էկոտուրիստական տարածքների օգտագործման և պահպանման համար: 11. Տեղի ֆինանսավորողների մասնակցության ապահովումը ենթակառուցվածքների ստեղծման և սարքավորումների հայթայթման գործընթացներին: 13. Լովեի, Շիրաբադի, Քորդ-Քույի, Զիարաթի, Քաբուդվալի, Բարանքուհի ջրվեժների տարածքների բարեկարգում: 18. Աշխատանքներ կապի էլեկտրոնային միջոցների որակական ու քանակական բարելավման ուղղությամբ՝ զբոսաշրջիկներին բարձր մակարդակի ծառայություններ մատուցելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գիտականորեն չհիմնավորված սկզբունքներով աշխատող տուրիզմը և այդ ոլորտում ընդգրկված մասնավոր անձանց գործունեությունը բացասական ազդեցություն է թողնում Գոլեստան նահանգի բնական լանդշաֆտների, էթնիկական արժեքների և ողջ տնտեսական համակարգի վրա:

2. էկոլոգիական ուղղվածությամբ կապիտալ ներդրումների պակասը, սահմանափակ զբոսաշրջային ենթակառուցվածքները բացասական հետևանքներ են թողնում Գոլեստան նահանգում էկոտուրիզմի զարգացման վրա:

3. Շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր աստիճանը և բնակչության գիտելքների ու իրազեկվածության ցածր մակարդակը բացասաբար են անդրադառնում նահանգում էկոտուրիզմի զարգացման վրա:

4. Բնական ներուժի և հնարավորությունների անբավարար օգտագործումը և էկոտուրիզմի վերաբերյալ սահմանափակ գիտելիքների ու անբարենպաստ օրենքների առկայությունը բացասաբար են անդրադառնում ոլորտի զարգացման վրա:

5. Էկոտուրիզմի զարգացումը հնարավորություն կտա՝ համեմատաբար քիչ կապիտալ ներդրումներով Գոլեստանում ընդլայնել տուրիզմի տնտեսությունը, նրանում կարևորելով էկոլոգիական ուղղվածությունը:

6. Գոլեստանում էկոտուրիզմի զարգացման համար կարող են բազա հանդիսանալ ազգային պարկերը /անտառները/, լողափերը, լեռնային մակերևույթի յուրահատուկ բլուրները, ցեխային հրաբուխները/գոլֆեշանները/, ջրվեժները, բնակչության յուրահատուկ մշակույթը, էթնիկական արժեքները:

7. Էկոտուրիզմի տարածքային առանձնահատկությունների բացահայտման, հեռանկարային պլանավորման ռազմավարության մշակման համար SWOT վերլուծության մատրիցայի օգնությամբ ստացված արդյունքները կարող են օգտագործվել գիտագործնական ծրագրերի կազմման նպատակով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերոնշյալ եզրակացությունները հաշվի առնելով, անհրաժեշտ են հետևյալ լուծումները՝

1. Մշակել և պետականորեն ընդունել գիտականորեն հիմնավորված տուրիզմի /էկոտուրիզմի/ զարգացման ռազմավարական քաղաքականություն և նրա բազայի վրա մշակել էկոտուրիզմի զարգացման ծրագրեր:

2. Ստեղծել պայմաններ տեղական և օտարերկրյա կապիտալ ներդրումների համար: Այդ կապիտալն ուղղել ավելի հեռանկարային շրջաններ:

3. Ընդլայնել տուրիզմի (հատկապես էկոտուրիզմի) աշխարհագրությունը, մեծացնել նրա կարողությունը՝ դարձնելով երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:

4. Տուրիզմի արդյունաբերության զարգացման ծրագրերում և նրանց իրագործման ընթացքում խրախուսել տեղաբնիկների մասնակցությունը՝ նրանց շահերի պաշտպանության և մշակութային ավանդույթների պահպանման նպատակով:

5. Էկոտուրիզմի հեռանկարային զարգացման՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի շրջանակում, ըստ ռազմավարական առաջնահերթությունների կապիտալ ներդրումներն ուղղել այնպիսի դեստինացիաների, ինչպիսիք են Կասպից ծովի լողափերը, Գորգանի ծոցը, Միանկալե թերակղզին, Նահար-Խորանի և Քորդ Քույ անտառային պարկերը, Բանդար Գազի և մյուս ազգային պարկերը, Գոմիշանի ցեխային հրաբուխները, բուժիչ հատկանիշներով օժտված հանքային տաք աղբյուրների՝ Գոլ-Ռամիանի և Զիարաթի հարակից տարածքները, հնէաբանական առումով Քարամի հին մարդաբնակ քարանձավը և բնաջնջման եզրին գտնվող Շեմշադ Զեշմե Բոլբոլ անտառային շրջանը:

6. Գոլեստան նահանգում հիմնել էկոտուրիզմի զարգացման խորհուրդ, որը մեկ հարթության կբերի նահանգում էկոտուրիզմի ոլորտի հետ կապ ունեցող պետական և մասնավոր ընկերությունների գերատեսչությունների գործունեությունը:

7. Զարգացնել էկոտուրիզմի դեռևս թույլ ձևավորված օջախները, ստեղծել նոր օջախներ /կամպուսներ/ և աստիճանաբար նրանք դարձնել նահանգի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման աճի բևեռներ:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1.Մոհաջեր Է., “Էկոտուրիզմը որպես մարդ-բնություն փոխհարաբերության ներդաշնակման գործոն”: Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն /Լ.Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը/, Երևան, 2011թ., էջ 29-34

2.Ավագյան Ա.Ռ., Մոհաջեր Է., “Սերվիսագիտության ժամանակակից հիմնախնդիրների վերլուծությունը”: Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, N2, Երևան, 2013թ., ISSN: 1829-1759, էջ 35-40

3.Ավագյան Ա.Ռ., Մոհաջեր Է., “Իրանի Գոլեստանի մարզի էկոտուրիզմի զարգացման նախադրյալների գնահատականը”: Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, N3, Երևան, 2014թ., ISSN: 1829-1759, էջ 41-46

4.Մոհաջեր Է., “The protection of birds under extinction in Golestan province” /“Կարմիր գրքում գրանցված թռչունների պահպանումը Գոլեստան նահանգում”/ գիտական մենագրություն: “Scientific aspiration” հրատարակչություն, Գորգան, 2017թ., ISSN: 964-8602-63-8, 83 էջ

5. Մոհաջեր Է., “Development of Ecotourism Strategies using SWOT: the case of Golestan province, Iran”. World journal of environmental biosciences, Vol 6, supplementary, ISSN: 2277-8047; pp: 58-65

6.Մոհաջեր Է., Ավագյան Ա., «Evaluation of Ecotourism capabilities of Golestan province». International Journal of Bulletin of Environment, Pharmacology and Life Sciences; Vol 3(12), November 2014, ISSN: 2277-1808, էջ 116-128 (www.bepls.com)

7. Մուսազադեհ Հ., Շահքուհի Է., Մոհաջեր Է., Խաջե Շահքուհի Ա., «Attention to medium and small cities another approach in the development of the regional cities /A case study in Gorgan/». The 3-rd international conference on Geographical science, November 3, 2016, Shiraz-Iran, N2016/25-2627-154, էջ ICGS 1-8

8. Մոհաջեր Է., Գրիգորյան Վ., «Prospects and problems of ecotourism in Iran». World journal of environmental biosciences, Vol 6, 2017, supplementary, ISSN: 2277-8047, էջ 31-33

9. Ավագյան Ա. Ռ., Մոհաջեր Է., «Մարդ-բնություն փոխհարաբերության սոցիալ-էթնիկական սկզբունքների վերլուծությունը»: Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի պետական համալսարան, N3, 2016թ., ISSN: 1829-4480, էջ 111-118

ЭСМАЙИЛ ДЖАФАРОВИЧ МОХАДЖЕР

РАЗВИТИЕ ЭКОТУРИЗМА В ПРОВИНЦИИ ИРАНА ГОЛЕСТАН

Диссертация посвящена исследованию потенциала и возможностям развития экотуризма в штате Голестан Ирана.

Экотуризм - это вид туризма, который требует ответственной поездки в природные районы для защиты биологической среды и природных ресурсов, и обеспечения благосостояния местных жителей, создавая для них стабильный доход.

Штат Голестан является одним из главных районов туризма Ирана. Развитию туризма способствуют благоприятные природные условия, своеобразный ландшафт, этносы с исключительными и привлекательными традициями, созданная инфраструктура. Вместе с тем уровень использования и развития экотуристических возможностей Голестана низкий. Ожидаемые доходы и объемы капитальных инвестиций оказываются низкими.

Тем не менее, нет научно обоснованной программы для руководства деятельностью туристических компаний, которая поможет обеспечить туризм с экологической ориентацией и обеспечить сохранение этнических ценностей и исторического и культурного наследия.

Организованное экотуризм позволит обеспечить социально-экономическое развитие провинции Голестан, решение экологических проблем и устойчивое развитие человека.

Целью исследования является выявление препятствий на пути развития экотуризма в провинции Голестан посредством использования современных принципов, подходов, методов и методологии в географической науке, а также разработки путей их устранения.

Объектом исследования является система экотуризма в штате Голестан. Предметом исследования являются отличительные (пространственные и временные) особенности и изменения территории экотуризм; взаимосвязей и взаимодействий между системой экотуризма и отдельными элементами других форм общественной жизни.

Предлагаемые области экотуризма через развитие могут превратиться в полюсы роста (центры) и служить основой для социально-экономического развития всей страны, решения экологических проблем и устойчивого развития человека.

Научная новизна исследования заключается в следующем:

1. Разработана новая концептуальная основа для оценки направлений экотуризма на основе принципов устойчивого развития человеческого потенциала.

2. В контексте времени и пространства разработана научно обоснованная система (модель) экотуризма, которая может быть использована для изучения система экотуризма в других областях.

3. Выявлено, что деятельность национальных и местных органов власти экотуризма в Голестане может быть эффективной только при четких стратегических планах.

4. Используя аналитическую программу SWOT, определены сильные и слабые стороны направлений экотуризма в провинции Голестан, а также были даны научные обоснования их гармонизации.

Из выводов отметим следующие:

1. Туризм, работающий на научно необоснованных принципах, а также деятельность частных лиц, вовлеченных в эту сферу, негативно влияет на природные ландшафты, этнические ценности и всю экономическую систему штата Голестан.

2. Нехватка капитальных инвестиций экологической направленности, ограниченная туристическая инфраструктура негативно влияет на развитие экотуризма в штате Голестан.

3. Высокая степень загрязнения окружающей среды, не рациональное использование природного потенциала и возможностей, а также ограниченные знания об экотуризме, наличие неблагоприятных законов негативно влияют на развитие экотуризма.

Предложены новые подходы для перспективного развития экотуризма, а также улучшения настоящего его состояния в штате Голестан, из которых можно отметить следующие:

1. В штате Голестан учредить совет по развитию экотуризма, в который входят представители государственной и частной организаций в секторе экотуризма.

2. Создать привлекательные условия и возможности для местных и иностранных капиталовложений в большинстве перспективных районов.

3. В рамках краткосрочных и долгосрочных программ по перспективному развитию экотуризма, в стратегической первоочередности направить капитальные инвестиции в такие дестинации, как пляжи Каспийского моря, Горганский залив, полуостров Мианкале, лесные сады Нахар-Хорана и Корд Куйя, национальные парки Бандар Газа, грязевые вулканы Гомишана, прилегающие к минеральным лечебным горячим источникам Гол-Рамиана и Зиарата, представляющие археологическое значение находящийся на краю уничтожения лесной массив Шемшад Чешме Болбола и древняя пещера Карама.

ESMAEIL JAFAR MOHAJER

ECOTOURISM DEVELOPMENT IN GOLESTAN PROVINCE OF IRAN

The research is a study of the evaluation of abilities and potentials of ecotourism development in Golestan province of Iran.

Ecotourism is a type of tourism, which requires a responsible trip to natural areas for protecting biological environment and natural resources, and securing local people welfare by generating stable income for them. Ecotourism is an important source for sustainable socio-economic development.

A unique ecotourism development area is the Golestan province of Iran. The province has abundant favorable natural conditions, unique landscapes and ethnos living in exceptional and attractive traditions, a certain level of infrastructure which contributes to ecotourism development in this area. However, the utilization level of ecotourism potential and opportunities in Golestan is low. The expected Revenue is small and the volume of capital investments is low.

Yet, there is no scientifically justified program to guide the activities of tourism companies, which will help providing tourism with ecological orientation, and ensuring preservation of ethnic values and historical and cultural heritage.

Organized ecotourism will enable to ensure the socioeconomic development of Golestan province, the solution of environmental issues and sustainable human development.

The research aim is to study and find out the ecotourism development obstacles in Golestan province and to present their removal ways by the use of contemporary principles, methods, approaches and methodology of geographical science.

The **objec**t of the research is the ecotourism system in the Golestan province. The **subject** of the research is the distinctive (spatial and time) features and changes of the ecotourism territory; interconnections and interactions between the ecotourism system and the individual elements of other forms of social life.

The proposed eco-tourism areas via development can turn into growth poles (centers) and serve as a basis for socioeconomic development of the entire country, the solution of ecological problems, and sustainable human development.

Research scientific novelty:

1. A new conceptual framework for evaluation of ecotourism destinations was developed based on sustainable human development principles.

2. In the context of time and space, a scientifically justified ecotourism system (model) was developed, which can be used to study ecotourism systems in other areas.

3. It was revealed that the ecotourism activities of the national and local self-government institutions in Golestan can be effective only under clear strategic plans.

4. Using the SWOT analytical program, the strengths and weaknesses of ecotourism destinations in Golestan province were identified, and the scientific justifications for their harmonization were given.

The following main conclusions were concluded:

1. The tourism industry governed with scientifically unjustified principles and the activities of private individuals involved in this sector have a negative impact on the natural landscapes, ethnic values and the entire economic system of the Golestan province.

2. The lack of capital investments with ecological purposes and limited tourism infrastructure has a negative impact on the development of ecotourism in Golestan province.

3. High level of environmental pollution, insufficient use of natural potential and limited knowledge of people on ecotourism, as well as unsupportive laws negatively affect the development of this sector in Golestan province.

The following recommendations are worthy to mention:

1. An ecotourism development council in the province should be established consisting of the representatives of public and private organizations in ecotourism sector.

2. Create favorable conditions for local and foreign capital investments in most prospective areas.

3. In the framework of short-term and long-term ecotourism development projects, the capital investments should be toward destinations such as the Caspian Sea beaches, the Gorgan Gulf, the Miankale Peninsula, the Nahar-Khoran and the Kord Kouy forest parks, the Bandar Gaza and other national parks. Also, toward destinations like Gomishan mud volcano, the areas of mineral hot springs of Gol-Ramian and Ziarat, the Karam's old-cave of archeological importance and the Shemshad-Cheshm-Bolbol forest reserve area that is at the risk of extinction.